ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/41

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Մասնակից՝ «Անգել» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, հանդերձանքի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «01/145»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.02.2021թ.-ի թիվ 26/26/1851-2021 գրությամբ «Անգել» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 09.02.2021թ.-ի թիվ Ե/40/322-21 գրության հիման վրա, 11.02.2021թ.-ին «Անգել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 11.02.2021թ.-ին:

11.02.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/41 համարի ծածկագիրը:

15.02.2021թ.-ին և 05.03.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.03.2021թ.-ին:

2. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 09.02.2021թ.-ի թիվ Ե/40/322-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Անգել» ՍՊԸ-ի միջև 2020 թվականի հունիսի 9-ին կնքվել է №01/145 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Համաձայն «ՍԻՍՏԵՄԵՔՍ» ՍՊԸ կողմից ս/թ հունվարի 15-ին տրամադրված թիվ 2-20210115-2 փորձարկման արձանագրության, Պայմանագրի թիվ 26-րդ չափաբաժնով սահմանված 45 հատ խալաթները «Անգել» ՍՊԸ կողմից մատակարարվել է Պայմանագրի պահանջների խախտմամբ, ուստի Պայմանագիրը վերոնշյալ չափաբաժնով միակողմանի լուծվել է, որի մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվել է ս/թ փետրվարի 4-ին:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա. պարբերության պահանջներով, Ձեզ ենք ներկայացնում համապատասխան փաստաթղթերի պատճենները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Անգել» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Անգել» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 07.09.2020թ.-ին գրությամբ դիմել է «Անգել» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.02.2021թ.-ի թիվ 26/26/1851-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Ներկայացնելով գրավոր դիրքորոշում՝ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով թիվ ՍՑ-ԼՕ-2021/41 ընթացակարգի նախաձեռնման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը, գտնում ենք, որ նախաձեռնումը հիմնազուրկ է, իսկ նախաձեռնված ընթացակարգը՝ ենթակա մերժման հետևյալ պատճառներով՝

ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետի համաձայն ..... մասնակիցն ընդգրկվում է Գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝ <<պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե

ապացուցվում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները>>:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն <<Ձեռնարկատիրական գործունեություն իրականացրելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն տվյալ պայմաններում արտակարգ և անկանխատեսելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով>>:

<<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի և <<Անգել>> ՍՊԸ-ի միջև 09.06.2020թ. կնքված <<ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20>> ծածկագրով N 01/145 պայմանագրի համաձայն <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի և <<Անգել>> ՍՊԸ-ի միջև 09.06 .2020թ. կնքված <<ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20>> ծածկագրով N 01/145 պայմանագրի համաձայն <<Անգել>> ՍՊԸ-ն պարտավորվել է արտադրելու և պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ին մատակարարելու 80 լրակազմ <<Կոստյում ձմեռային>>, 45 հատ <<Խալաթ>>, 100 լրակազմ <<Ամենօյա համազգեստ>>, 90 զույգ <<Ուսադիրներ ամենօրյա>> և 30 լրակազմ <<Կոստյում>> ապրանքատեսակներ:

23.09.2020թ. համապատասխան հաշիվ-ապրանքագրով <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ին է մատակարարվել պայմանագրով նախատեսված 100 լրակազմ <<Ամենօյա համազգեստ>>, 45 հատ <<Խալաթ>> և 90 զույգ <<Ուսադիրներ ամենօրյա>> ապրանքատեսակները: 100 լրակազմ <<Ամենօյա համազգեստ>> և 90 զույգ <<Ուսադիրներ ամենօրյա>> ապրանքատեսակները <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի կողմից ընդունվել և, թեկուզ ուշացումներով, վճարումները կատարվել են, իսկ 45 հատ <<Խալաթ>> ապրանքատեսակը վերադարձվել է <<Անգել>> ՍՊԸ-ին՝ որոշ տեխնիկական ձևափոխումներ կատարելու համար: Տեխնիկական ձևափոխումները կատարելուց հետո 21.10.2020թ. համապատասխան հաշիվ-ապրանքագրով 45 հատ խալաթները կրկին ուղարկվել են <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ին : Այնուհետև 27.10.2020թ. ուղարկվել է նաև <<Անգել>> ՍՊԸ-ի հաշվին կատարված խալաթների գործվածքի բաղադրության վերաբերյալ նյութագիտական փորձաքննության եզրակացությունը, (կցվում է), համաձայն որի գործվածքի բաղադրությունը համապատասխանում է պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին, չնայած այդ պահանջը չի եղել ոչ պայմանագրով, ոչ մրցույթը հրավերի տեխնիկական բնութագրով:

Փաստացի 45 խալաթները 2020թ. հոկտեմբերի 21-ից գտնվել են <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի տնօրինության տակ, սակայն դրանց դիմաց վճարումներ չեն կատարվել, խախտելով պայմանագրով նախատեսված վճարման ժամանակացույցը:

Համաձայն կնքված վերահիշյալ պայմանագրի 5.2 կետի Գնորդը (տվյալ դեպքում <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ն) Վաճառողից (տվյալ դեպքում <<Անգել>> ՍՊԸ-ից) հանձման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

բ) պայմանագրի 5.4 կետով սահմանված է, որ եթե Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին՝ 7 աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրը:

2020թ. ամբողջ ընթացքում, ընդհուպ մինչև օրս <<Անգել>> ՍՊԸ-ն գործել է ֆորս-մաժորային պայմաններում: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2020թ. մարտ ամսին հայտարարել է կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված համաճարակ: Դրա հետ կապված ՀՀ Կառավարության 16.03.2020թ. <<ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին>> թիվ 298-Ն որոշմամբ ՀՀ ամբողջ տարածքում 2020թ. մարտի 16-ից մինչև սեպտեմների 11-ը հայտարարվել է արտակարգ դրություն, իսկ ՀՀ Կառավարության 11.09.2020թ. N 1514-Ն որոշմամբ 2020թ. սեպտեմների 11-ից մինչև 2021թ. հունվարի 11-ը ՀՀ-ում սահմանվել է կարանտին:

Այս սահմանափակումների և <<Անգել>> ՍՊԸ-ի բազմաթիվ աշխատողների՝ կորոնավիրուսով վարակվելու պատճառով ամիսներ շարունակ ՍՊԸ-ն դադարեցրել է աշխատանքը, իսկ աշխատելու ընթացքում՝ գործել 20-25 % հզորությամբ, որի պատճառով խաթարվել է տասնյակ պայմանագրերով Ընկերության ստանձնած պարտավորությունների կատարումը, ուստի առաջացել էր ֆինանսական միջոցների խիստ դեֆիցիտ:

45 հատ խալաթները <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ին ուղարկելուց հետո բազմաթիվ անգամներ ՓԲԸ-ի ղեկավարությանը հեռախոսազանգերով ներկայացրել ենք իրավիճակը և խնդրել փոխանցելու 45 հատ խալաթների գումարները, քանի որ 80 լրակազմ <<Կոստյում ձմեռային>> և 30 լրակազմ <<Կոստյում>>ապրանքատեսակները գտնվում են արտադրման պրոցեսում, համարյա պատրաստի վիճակում, սակայն վերջնական ավարտի համար անհրաժեշտ աքսեսուարները ձեռք բերելու համար գումարներ չկան:

Մինչև 2020թ.-ի դեկտեմբերի 8-ը սպասելով և տեսնելով, որ <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ն, անտեսելով հիշյալ պայմանագրով նախատեսված վճարման ժամկետները, չի փոխանցում 45 հատ խալաթների գումարը, 08.12.2020թ-ի գրությամբ (կցվում է) <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին հայտնել ենք, որ խալաթների գումարը չփոխանցելու պատճառով <<Անգել>> ՍՊԸ-ն միակողմանի լուծում է պայմանագիրը, հրաժարվում է համապատասխանաբար 80 և 30 լրակազմ <<Կոստյում ձմեռային>> և <<Կոստյում>>ապրանքատեսակների մատակարարումից և պահանջել մատակարարված 45 հատ խալաթները եր վերադարձնել <<Անգել>> ՍՊԸ-ին: Տեսնելով, որ <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ն չի վերադարձնում 45 հատ խալաթները, 22.12.2020թ. N Ա-025 գրությամբ <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին կրկին անգամ հայտնել ենք պայմանագիրը մեր կողմից միակողմանի լուծված լինելու մասին, հիմնավորել, որ պայմանագրի լուծման մեղավորը <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ն է: Հիմնավորումները չկրկնելու համար ուղարկում ենք հիշյալ գրության պատճենը: Նման պայմաններում, երբ դեռևս 08.12.2020թ. մեր կողմից պայմանգիրը միակողմանի լուծված է եղել, տարօրինակ է <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի կողմից 17.12.2020թ. արդեն իսկ լուծված պայմանագիրը իրենց կողմից 14-րդ և 34-րդ չափաբաժինների մասով , իսկ 04.02.2021թվ.-ին՝ 26-րդ չափաբաժնի մասով պայմանագրի միակողմանի լուծելը միակողմանի լուծելը:

ՀՀ Քաղ.օր. 420 հոդվածի 1-ին մասի համաձայն, եթե պարտավորությունը չկատարելը, կամ անպատշաճ կատարելը տեղի է ունեցել 2 կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորությամբ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոգրյալի հիման վրա, հաշվի առնելով <<Անգել>> ՍՊԸ-ի գործողություններում մեղքի բացակայությունը, ինչպես նաև այն,որ դեռևս 08.12.2020թ <<Անգել>> ՍՊԸ-ն արդեն

իսկ միակողմանի մասնակի լուծած է եղել պայմանագիրը, այդ մասին պատշաճ իրազեկելով <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ին, խնդրում ենք <<Անգել>> ՍՊԸ-ն Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված սույն ընթացակարգը մերժել:

Կից ուղարկվում է մեր կողմից <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ին ուղարկված վերը հիշատակված 2 գրությունների պատճենները <<3 >> թերթից և փորձագետի եզրակացությունը 3 թերթից:

Նկատի ունենալով,որ սույն դիրքորոշումը մեր կողմից վերջնական է, խնդրում ենք քննության նիստը անցկացնել մեր ներկայացուցչի բացակայությամբ:

Վերոգրյալի հիման վրա, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Անգել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

4. <u>ՍՑ-LO-2021/41 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Անգել» ՍՊԸ-ի միջև 09.06.2020թ.-ին կնքվել է թիվ «01/145» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Մասնակիցը պետք է մատակարարի 80 լրակազմ «Կոստյում ձմեռային», 45 հատ «Խալաթ», 100 լրակազմ «Ամենօրյա համազգեստ», 90 զույգ «Ուսադիրներ ամենօրյա» և 30 լրակազմ «Կոստյում» ապրանքատեսակները:

iii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 18.01.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ Ε/13/2444-20 ծանուցման համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար հանդերձանքի (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով 28.04.2020թ.-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 14, 26, 30, 32 և 34-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով «Անգել» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 09.06.2020թ.-ին կնքվել է թիվ 01/145 պայմանագիրը

(այսուհետ՝ Պայմանագիր)՝ 4494000 (չորս միլիոն չորս հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 14-րդ չափաբաժնով սահմանված 80 լրակազմ ձմեռային կոստյումները և 34-րդ չափաբաժնով սահմանված 30 լրակազմ կոստյումները, որոնց ընդհանուր գինը կազմում է 2616000 (երկու միլիոն վեց հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամը՝ «Անգել» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարավել:

Վերոնշյալով պայմանավորված՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն միակողմանի լուծել է «Անգել» ՍՊԸ-ի հետ 09.06.2020թ.-ին կնքած թիվ 01/145 պայմանագիրը 14-րդ և 34-րդ չափաբաժնի մասով:

Պատվիրատուն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 09.02.2021թ.-ին թիվ Ե/40/322-21 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.02.2021թ.-ի թիվ 26/26/1851-2021 գրությամբ «Անգել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ

մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով 28.04.2020թ.-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 14, 26, 30, 32 և 34-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով վերջինիս և «Անգել» ՍՊԸ-ի միջև 09.06.2020թ.-ին կնքվել է թիվ 01/145 պայմանագիրը 4494000 (չորս միլիոն չորս հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 14-րդ չափաբաժնով սահմանված 80 լրակազմ ձմեռային կոստյումները և 34-րդ չափաբաժնով սահմանված 30 լրակազմ կոստյումները, որոնց ընդհանուր գինը կազմում է 2616000 (երկու միլիոն վեց հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամ՝ «Անգել» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարավել: Ինչով պայմանավորված՝ Պատվիրատուն միակողմանի լուծել է Մասնակցի հետ 09.06.2020թ.-ին կնքած թիվ 01/145 պայմանագիրը՝ 14-րդ և 34-րդ չափաբաժնի մասով, www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 18.01.2021թ.-ին հրապարակելով Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ Ε/13/2444-20 ծանուցումը:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 18.01.2021թ.-ին՝ Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը www.gnumner.am կայքում հրապարակվելու պահին, սակայն «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 09.02.2021թ.-ին թիվ Ε/40/322-21 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ

իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-*

Հայաստան բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.02.2021թ.-ի թիվ 26/26/1851-2021 գրությամբ «Անգել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/41 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**